ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«19» սեպտեմբեր 2021 թ. N 206

ք.Ստեփանակերտ

2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-ԻՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՍԱՆՁԱԶԵՐԾՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՎՆԱՍ ԿՐԱԾ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿ ՄՈՒՐՀԱԿՆԵՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ՄԱՐՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԾՐԱԳՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունիսի 3-ի N 575-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 14-րդ կետի 1-ին ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝

1) 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմական գործողությունների հետևանքով նյութական վնաս կրած ֆիզիկական և իրավաբանական անձանց պետական ֆինանսական աջակցության միջոցառման շրջանակում տրամադրված գանձապետական հասարակ մուրհակների վաղաժամկետ մարման միջոցով գործարար ծրագրի (այսուհետ՝ գործարար ծրագիր) նպատակային ուղղությունները՝ համաձայն N 1 հավելվածի,

2) գործարար ծրագրին ներկայացվող պահանջները՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Արմեն Թովմասյան

Հավելված N 1
Արցախի Հանրապետության
էկոնոմիկայի և գյուղատնտեսության
նախարարի 2021 թվականի օգոստոսի 19 -ի
N 206 հրամանի

ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գործարար ծրագիրը պետք է վերաբերվի հետևյալ ոլորտային ուղղություններից որևէ մեկին՝

1) գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնաբուծություն.
2) մշակող արդյունաբերություն.
3) թափոնների կառավարում և վերամշակում.
4) շինարարություն.
5) ավտոմեքենաների նորոգում.
6) փոխադրումներ և պահեստային տնտեսություն.
7) կացության և հանրային սննդի կազմակերպում.
8) տեղեկատվություն և կապ.
9) կրթություն.
10) առողջապահություն.
11) մշակույթ, զվարճություններ և հանգիստ.
12) սպասարկման այլ ծառայություններ:

Հավելված N 2
Արցախի Հանրապետության
էկոնոմիկայի և գյուղատնտեսության
նախարարի 2021 թվականի օգոստոսի 19 -ի
N 206 հրամանի

ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Գործարար ծրագիրը պետք է նկարագրի ապագա ձեռնարկատիրական գործունեությունը որոշակի ժամանակահատվածի կտրվածքով՝ առավելագույնը վեց տարի ժամկետով: Գործարար ծրագիրը պետք է ունենա հետևյալ բաժիններից կազմված կառուցվածք և համապատասխան փաստաթղթեր՝

1) տիտղոսային թերթ,
2) բովանդակություն,
3) ամփոփ նախաբան,
4) արտադրանքի (ծառայության) նկարագիրը,
5) շուկայի հետազոտություն,
6) մարքեթինգի ռազմավարություն (պլան),
7) արտադրական պլան,
8) կազմակերպչական պլան,
9) ներդրումային պլան,
10) ֆինանսական պլան,
11) ռիսկի գնահատում և ապահովագրում,
12) պայմանագրերի, տեղեկանքների, նախահաշիվների, վկայականների պատճեններ:

2. Գործունեության կոնկրետ տեսակից կախված, կարող են պակասեցվել կամ ավելացվել նոր բաժիններ, ինչպես նաև վերանվանվել բաժիններն, առանց իմաստային փոփոխության:

2. ԾՐԱԳՐԻ ԲԱԺԻՆՆԵՐԸ

1. ***«Տիտղոսային թերթ»*** բաժինը պետք է ներառի հետևյալ տեղեկությունները՝

1) կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) անվանումը, առկայության դեպքում նաև՝ ֆիրմային անվանումը,

2) պետական գրանցման համարը, ամսաթիվը,

3) պետական հաշվառման համարը,

4) իրավաբանական հասցեն,

5) հեռախոսահամարները, էլեկտրոնային փոստի և ինտերնետային էջի (առկայության դեպքում) հասցեները:

2. ***«Բովանդակություն»*** բաժինը պետք է ներկայացնի, թե ինչի մասին է խոսվելու գործարար ծրագրում և որ էջում կարելի է գտնել այս կամ այն տեղեկատվությունը:

3. «***Ամփոփ նախաբան***» բաժինը պետք է ներկայացնի գործարար ծրագրի մնացած բաժիններում մանրամասն ներկայացված տեղեկատվության հակիրճ բովանդակությունը, մասնավորապես՝

1) ծրագրի նպատակը,

2) ծրագրի համառոտ նկարագիրը,

3) ներկա իրավիճակը,

4) սկզբնական կապիտալի մեծությունը,

5) մուրհակի մարման գումարի և առկա սեփական միջոցների հարաբերակցությունը,

6) կանխատեսված ֆինանսական ցուցանիշները և վտանգները:

4. «***Արտադրանքի (ծառայության) նկարագիր***» բաժինը պետք է ընդգրկի ապագա արտադրանքի (ծառայության) մանրամասն նկարագրությունը՝ պարունակելով հետևյալ հարցերի հստակ պատասխանները՝

1) արտադրանքի մրցակցային նկարագրությունը և նրա կիրառման միջոցները, հատկությունները, դիզայնը և փաթեթավորումը: Անհրաժեշտ է բացատրել, թե ինչու սպառողը կընտրի հենց այդ արտադրանքը (ծառայությունը),

2) ինչպիսի՞ն է մրցակիցների կողմից առաջարկվող նման արտադրանքների (ծառայությունների) շրջանակը, և արդյո՞ք ընտրված արտադրանքն (ծառայությունն) ունի ինչ-որ առանձնահատուկ գծեր՝ մրցակիցների մոդելներին համեմատ:

5. «***Շուկայի հետազոտում***» բաժինը պետք է ընդգրկի կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) կողմից ընտրված շուկայի վերլուծությունը, պատասխանելով հետևյալ հարցերին՝

1) ինչպիսի՞ն են ճյուղային շուկայի սպառողների հիմնական բնութագրերը,

2) տվյալ սեգմենտում ինչպիսի՞ բաժին կարող է ունենալ գործունեությունը՝ որոշելով իր դիրքը շուկայում, մտադրվու՞մ է արդյոք դուրս մղել մրցակիցներին՝ առաջարկելով նման ապրանքներ, թե կփորձի գտնել իր տեղը:

6. «***Մարքեթինգի ռազմավարություն***» բաժինը պետք է ընդգրկի մարքեթինգի բոլոր էլեմենտները և պատասխանի հետևյալ հարցերին՝

1) ապրանքների տարածման ինչպիսի՞ ուղիներ է օգտագործելու կազմակերպությունը (անհատ ձեռնարկատերը) (կօգտագործի միջնորդների ծառայություններ, թե սեփական ֆիրմային խանութների միջոցով կվաճառի),

2) ապրանքների խթանման ինչպիսի՞ արդյունավետ միջոցներ կձեռնարկի կազմակերպությունը (անհատ ձեռնարկատերը) (գովազդ, իրացման խրախուսում, քարոզչություն, անձնական վաճառք և այլն):

7. «***Արտադրական պլան***» բաժնում արտադրական պլանի տեխնիկական նկարագրման հետ մեկտեղ պետք է տրվեն արտադրական ծախսերի տնտեսական հաշվարկները: Պետք է տրվեն հետևյալ հարցերի պատասխանները՝

1) որո՞նք են արտադրության և տեխնոլոգիայի հիմնական մեթոդները,

2) ինչպիսի՞նն է արտադրական պրոցեսի ընդհանուր կառուցվածքը: Հնարավո՞ր է արդյոք գործառնություններում առավելություններ ունենալ: Հնարավորության դեպքում՝ արտադրական պրոցեսների կառուցվածքը ցույց տալ արտադրական հոսքերի սխեմայի տեսքով,

3) ինչպիսի՞ հումք և նյութեր են անհրաժեշտ, ովքե՞ր են կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) հիմնական մատակարարները, նշել նրանց անունները և հասցեները: Գործունեության կոնկրետ տեսակից կախված օգտագործվող հումքի և նյութերի չափաքանակները պետք է համապատասխանեն սահմանված նորմատիվներին,

4) արտադրության կազմակերպման համար անհրաժեշտ հզորությունները: Գոյություն ունե՞ն արդյոք գործող հզորություններ, ինչպիսի՞ն է նրանց ընդլայնման պլանը, ինչպիսի՞ն են դրա հետ կապված ծախսերը և ժամկետները: Գործունեության կոնկրետ տեսակից կախված՝ առկա՞ է արդյոք և նախատեսվող հզորությունների, մասնավորապես՝ շենքերի և շինությունների պարամետրերը պետք է համապատասխանեն սահմանված նորմատիվներին,

5) ինչպե՞ս է իրականացվում որակի վերահսկումը,

6) ինչպիսի՞նն են առկա և ձեռքբերման ենթակա սարքավորումների նկարագրումը,

7) որտե՞ղ է տեղադրված լինելու արտադրությունը՝ տեղադրության և աշխարհագրական պայմանների տեսանկյունից,

8) որո՞նք են այսօր և ապագայում արտադրության համար անհրաժեշտ աշխատատեղերը, աշխատանքի վարձատրության նախատեսվող ձևերը և համակարգերը, ինչպես նաև որքա՞ն է պլանավորվող ամսական և տարեկան աշխատավարձի ֆոնդը,

9) համապատասխանո՞ւմ է արդյոք աշխատողների որակավորումը սարքավորումների առանձնահատկություններին և հնարավորություններին,

10) կարո՞ղ է ձեռնարկատերը հուսադրվել արտադրության մասշտաբի էֆեկտի վրա: Ինչպիսի՞ն է ենթադրվող ծախսերի կառուցվածքը: Արտադրանքի միավորի ինքնարժեքի հաշվարկի օրինակելի ձևը ներկայացված է N 1 ձևում:

8. «***Կազմակերպչական պլան***» բաժինը պետք է ծանոթացնի կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) կողմից ընտրված սեփականության ձևի, կառավարման հարցերի, լիազորությունների և պատասխանատվության, կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) կազմակերպչական կառուցվածքի տիպի հետ.

1) ինչպիսի՞ն է սեփականության ձևը,

2) ովքե՞ր են հիմնական փայատերերը կամ բաժնետերերը՝ փակ բաժնետիրական ընկերությունների համար բաժնետերերի լրիվ ցուցակը, իսկ բաց բաժնետիրական ընկերությունների համար՝ բաժնետերերի ցուցակը, որոնք տիրում են բաժնետիրական կապիտալի ավելի քան հինգ տոկոսին,

3) բաժնետերերի ներկայացման սխեման է՝

ա) անուն, ազգանուն,

բ) բաժնետոմսերի քանակը և տիպը, որին տիրում է տվյալ անձը,

գ) բաժնետոմսերի տոկոսային հարաբերակցությունը, որին տիրում է տվյալ անձը ընդհանուր բաժնետիրական կապիտալի նկատմամբ,

4) բաժնետիրական ընկերության թողարկած և/կամ թողարկվելիք բաժնետոմսերի քանակը,

5) քվեարկման իրավունքի ինչպիսի հիմնական դրույթներ և կանոններ են սահմանված, շահաբաժինների վճարման ինչպիսի կարգ է նախատեսվում,

6) ովքեր են մտնում ընկերության տնօրենների խորհրդի և վարչության կազմի մեջ (նրանց համառոտ կենսագրական տվյալները՝ կրթությունը, որակավորումը, փորձը և զբաղեցրած պաշտոնները),

7) ինչպիսին են ձեռնարկության կազմակերպչական կառուցվածքը, ստորաբաժանումների փոխազդեցության միջոցները: Կառուցվածքը նպատակահարմար է տալ սխեմայի տեսքով:

9. ***«Ներդրումային պլան»*** բաժինը պետք է ներկայացվի երկու հիմնական ուղղություններով՝

1) անհրաժեշտ ներդրումներ, որում պետք է հակիրճ ներկայացվի ֆինանսական պահանջները ինչպես գործը սկսելու, այնպես էլ ծրագրում սահմանված ժամկետներում գոյատևելու համար և այդ գումարի ծախսումների ուղղությունները,

2) ներդրումների աղբյուրները՝ որտեղից պլանավորվում են ստանալ ֆինանսական միջոցները:

Ֆինանսավորման աղբյուրներին վերաբերող հարցերը կարող են ունենալ հետևյալ բովանդակությունը՝

1) ենթադրվող ֆինանսական համակարգը և նրա գործիքները՝ բանկային վարկ, մուրհակներ, պարտատոմսեր, բաժնետոմսեր և այլն.

2) ֆինանսական պայմանագրերի անվտանգությունը ապահովող գրավներ և երաշխիքներ.

3) ձեռնարկության կրեդիտորների ցուցակը, պարտքերի գումարները և նրանց մարման ժամկետները.

4) հարկային արտոնությունները, որոնք կարելի է ստանալ ֆինանսավորման այս կամ այն միջոցի դեպքում:

10. ***«Ֆինանսական պլան»*** բաժինը պետք է ընդգրկի հետևյալ հիմնական փաստաթղթերը՝

ակտիվների, սեփական կապիտալի և պարտավորությունների հաշվեկշիռը (գործող կազմակերպությունների համար), եկամուտների և ծախսերի պլանը և դրամական միջոցների հոսքերի կանխատեսումը՝-համաձայն համապատասխանաբար NN 2, 3 և 4 ձևերի:

Ֆինանսական փաստաթղթերում առաջին տարին պետք է ներկայացվի ամսական կտրվածքով: Այս բաժնում հաշվարկվում են հետևյալ ցուցանիշները՝

ա. շահութաբերությունը: Հաշվարկվում է որպես շահույթի և կապիտալ ներդրումների կամ բաժնետիրական կապիտալի հարաբերակցություն, հաշվարկվում է յուրաքանչյուր տարվա համար և որպես միջին տարեկան մեծություն,

բ. կապիտալ ներդրումների հետգնման ժամկետը: Ենթադրում է այն տարիների թիվը, որի ընթացքում իրացումից ստացված եկամուտը, առանց գործառնական և վարչական ծախսերի փոխհատուցում է հիմնական կապիտալ ներդրումները,

գ. ոչ վնասաբերության նորման: Թողարկվող արտադրանքի իրացման մինիմալ չափը, որի դեպքում ապահովվում է «զրոյական շահույթ», այսինքն՝ վաճառքից ստացված

եկամուտը հավասարվում է արտադրական ծախսերին: Այն որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$BEP = \frac{FC}{P - AVC}, \quad \text{որտեղ}$$

BEP-ն՝ զրոյական շահույթ ստանալու համար վաճառքի մինիմալ քանակն է,
FC-ն՝ ընդհանուր հաստատուն ծախսերը,
P-ն՝ արտադրանքի գինը,
AVC-ն՝ մեկ միավոր արտադրանքի միջին փոփոխուն ծախսերը:

11. ***«Ռիսկի գնահատում և ապահովագրում»*** բաժնում անհրաժեշտ է կատարել հնարավոր ռիսկերի ընդհանուր գնահատումը՝ անդրադառնալով հետևյալ կետերին՝

1) ռիսկերի տեսակների, նրանց ծագման աղբյուրների վերլուծություն,

2) կորուստների նվազեցման միջոցառումները, հատկապես ֆորսմաժորային հանգամանքներում:

ՁԵՎ N 1

ՀԱՇՎԱՐԿ
ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՄԻԱՎՈՐԻ ԻՆՔՆԱՐԺԵՔԻ

h/h	Ծախսային հոդվածի անվանումը	Գումարը /ՀՀ դրամ/
1	Նյութական ծախսեր, այդ թվում՝	
1.1	հումք և նյութեր	
1.2	էլեկտրաէներգիա	
1.3	վառելիք	
2	Աշխատանքային ծախսեր, այդ թվում՝	
2.1	աշխատավարձ	
2.2	սոցիալական պարտադիր վճարներ	
3	Ամորտիզացիոն մասհանումներ	
4	Վարձակալական վճար	
5	Փոխառության տոկոս	
6	Չփոխհատուցվող հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ	
7	Այլ ծախսեր	
	ԸՆԴԱՄԵՆԸ	

ՀԱՇՎԵԿՇԻՌ
ԱԿՏԻՎՆԵՐԻ, ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԱԿՏԻՎՆԵՐ	ԳՈՒՄԱՐԸ (ՀՀ դրամ)		ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԳՈՒՄԱՐԸ (ՀՀ դրամ)	
	ժամանակաշրջանի սկիզբ	ժամանակաշրջանի վերջ		ժամանակաշրջանի սկիզբ	ժամանակաշրջանի վերջ
Ոչ ընթացիկ ակտիվներ			**Սեփական կապիտալ**		
			- կանոնադրական կապիտալ		
Պաշարներ			- կուտակված շահույթ		
			- սեփական կապիտալի այլ տարրեր		
Դրամական միջոցներ			**Պարտավորություններ**		
			- երկարաժամկետ պարտավորություններ (փոխառություն)		
Դեբիտորական պարտքեր			- պարտավորություններ անձնակազմին		
			- կրեդիտորական պարտքեր գնումների գծով		
Այլ դեբիտորական պարտքեր			- այլ կարճաժամկետ պարտավորություններ		
ՀԱՇՎԵԿՇԻՌ			ՀԱՇՎԵԿՇԻՌ		

Ձև N 3

ՊԼԱՆ

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ-ԾԱԽՍԵՐԻ

(<< դրամ)

h/h	Ցուցանիշները	1 տարի (ըստ ամիսների)						2 տարի				3 տարի (տարեկան)
		1	2	-	-	-	12	I	II	III	IV	
1	**Իրացման զուտ հասույթը** (իրացման հասույթ - անուղղակի հարկեր)											
2	**Ծախսերը՝** *այդ թվում*											
	- հումք և նյութեր											
	- աշխատավարձ											
	- ամորտիզացիա											
	- էլեկտրաէներգիա											
	- վառելիք											
	- տրանսպորտային ծախսեր											
	- չփոխհատուցվող հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ											
	- փոխառության տոկոսներ											
	- վարձավճարներ											
	- այլ ծախսեր											
3	**Համախառն շահույթը (1-2)**											
4	**Շահութահարկը**											
5	**Զուտ շահույթը (3-4)**											

Ձև N 4

ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ
ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ

(<< դրամ)

h/h	Ցուցանիշները	1 տարի (ըստ ամիսների)						2 տարի				3 տարի (տարեկան)
		1	2	-	-	-	12	I	II	III	IV	
1	**Մնացորդը ժամանակաշրջանի սկզբում**											
2	**Մուտքերը՝ այդ թվում**											
	- մուրհակի մարման գումար											
	- փոխառություն											
	- իրացման հասույթ											
	- այլ մուտքեր											
3	**Ելքերը՝** այդ թվում											
	- վճարված աշխատավարձ											
	- վճարումներ հումքի և նյութերի դիմաց											
	- վճարումներ ստացած ծառայությունների դիմաց											
	- փոխառության տոկոսներ											
	- վարձավճարներ											
	- փոխառության մարումներ											
	- այլ ելքեր											
4	**Մնացորդը ժամանակաշրջանի վերջում (1+2-3)**											